Ուստի Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցական յարգելի խորհրդի մեծարգոյ անդամները մեծ բարիք և մարդասիրական մի գեղեցիկ գործ կատարած կլինէին ամբողջ Ուտիացոց աշխարհի երկրագործ դասի ազգաբնակութեանց համար, եթէ որ այդ բարերար գաւառում, պահէին իրենց հարուստ եկեղեցու հաշուով մի շրջիկ քարոզիչ քահ. որ միանգամայն ազատ լինէր ծիսակատարութիւններից և ծուխ հովուելու պարտաւորութիւններից։ Ահա այսպիսով հետզհետէ բոլորովին կվերանային հարստահարութիւնն ու վաշխառուութիւնը և ամեն տեսակ չարիքներ և այն ատեն երկրագործ ժողովուրդը կսկսէր զարգանալ ու առաջ ընթանալ՝ թէ բարոյապէս և թէ տնտեսապէս, հաստատ և հզօր քայլերով։ Ահա, այսպիսով միայն կզարգանար ու կծաղկէր Ուտիացոց երկիրը և իւր առատ ու աղնիւ բերքերով հարստութեան աղբիւր և անսպառելի շտեմարան կըդառնար ոչ միայն Կովկասի, այլ և լայնածաւալ Ռուսիայի ամենահեռաւոր վաճառաշահ քաղաքների շահագործութեան համար։